ՄԱՐԻԱՄ ԾՈԼԻՆՅԱՆ
բանասիրական գիտ. թեկնածու

ՎՐԹ. ՓԱՓԱԶՅԱՆԻ ՍԻՄՎՈԼԻԿ ԱՐՁԱԿԸ

Հավատն առ ճշմարտություն սկսվում է նախկինում
ճշմարտություն համարվածի նկատմամբ կասկածից[1]:

Մահ → երազանք, պատրանք → սեր → ցավ → կյանք հավերժական վերադարձի երգը, որ մարդուն պարտադրում է դեպի իր ապագան տանող ելք, ուղի, դուռ որոնել, շնորհիվ «կյանքի փիլիսոփայության»՝ ԺԹ.-Ի. դդ. սահմանագծի ողջ եւրոպական եւ հայ գրականության մեջ ձեռք բերեց «հեթանոսական» որակ, վերածվեց բոլոր արժեքները վերագնահատելու պահանջի: Նորի՝ վերարժեւորվածի ուղին բարդ էր եւ հակասական, այս փիրույթում կարեւորվում էր բացառիկ անհատի՝ հանճարի՝ գերմարդու (երբեն էլ օրենսդիր իմաստով, նորին ծնունդ տվող, գիտությունը կամ մշակույթը առաջ մղող իմաստով) դերը: Ամբոխի եւ առաջնորդի հարաբերության հարցը հետաքրքիր դրսեւորում ունեցավ բազմաթիվ հեղինակների մոտ՝ Լ. Շանթ, Դ. Վարուժան... Օրինակ՝ Ռ. Զարդարյանի «Գամփռը» սիմվոլիկ պատկերում միայնակ ու հզոր գամփռը գնում է մենակ ու հալածական՝ բզկտված մանր շների ոհմակից: Վրթ. Փափազյանի «Ընթրոստ երգերում» այդ առաջնորդը ոչ այլ ինչ է, եթե ոչ նիցշեական «ազատ մտքեր» բնորոշված նորի օրենսդիրը, որը, մարդու նկատմամբ անսահման սիրով տոգորված, դարերի խորքից եկող սիմվոլիկ մուրճի փիլիսոփայությունն է քարոզում՝ «սա այսպե՛ս պիտի լինի» անսասան կամքով: Եւ այն, որ հաճախ «ամբոխ եւ հանճար» հարաբերությունը ողբերգական ավարտ է ունենում հանճարի համար, հոգեբանորեն շատ խոր բացատրվում է Վրթ. Փափազյանի կողմից նույն «Ընթրոստ երգերում» եւ բազմաթիվ այլաբանական գրույցներում, որոնք այլ կերպ բնորոշվում են իբրեւ սիմվոլիկ հեքիաթներ եւ մանրապատումներ: Ֆ. Նիցշեի ստեղծագործություններում ընդհանրապես շատ հաճախ է խոսվում «առաքինիների» մասին: Դրանք այն երեսպաշտ փարիսեցիներն են, որոնք կարեւորում են կեղծ ցուցադրականը՝ տպավորություն ստեղծելու նպատակով, այնինչ իրականում շատ հեռու են առաքինությունից եւ ընդունակ են ամենահեշտին ստորության: Այդ նրանք են, ովքեր կարող են իրենց ձեռնտու կարծիք ստեղծել կամ ուղղություն տալ հասարակական կարծիքին, ովքեր «ավանդապաշտ» են, «բարոյական», ովքեր խիստ դատափե-

1 **Ф. Ницше**, *Переоценка всего ценного, в книге "Утренняя заря. Переоценка всего ценного. Веселая наука"*, Минск, 2003, с. 331.

տում են որեւէ մեկին՝ բարու եւ չարի ընդունված մտակաղապարից «շեղվելու» դեպքում, ովքեր իրականում կեղծ բարոյական հովիվներ են, որ առաջնորդում են հոտը, կամ մեկ բառով՝ «առաքինիները»:

Վրթ. Փափազյանի «Ըմբոստ երգերում» շատ հետաքրքիր բացատրություն է տրվում ամբոխ - հանճար հարաբերությանը՝ որպես միջնորդ օղակ ունենալով նաեւ «առաքինիներին»: Այդ «առաքինիները» ժողովրդական դարավոր նախապաշարումներին ծառայող եւ ամբոխի ստոր բնազդներն ուղղորդող օղակ են: Նրանց խորթ է լեռների վրա սավառնող գիտակցության կրակն իր մեջ ունեցող ազատ միտքը՝ Պրոմեթեւսի, Արտավազդի մտածելակերպը, նորի ընկալումը, իսկական բարու եւ լուսավորի քարոզը, քանզի նրանք ամեն ինչին նայում են միայն իրենց իշխանության, շահի ելակետից: «Ես ձեզ եմ խոսում, գծուծ նախնորդներ, որ «ժողովրդյան շահերին ծառայողների» բարեպաշտ ժպիտներ հագած՝ խուսափում եք մերկ ճշմարտությունից, որպես բուն՝ շլացնող լույսից»[2], - գրում է Վրթ. Փափազյանը: «Ամբողջ արժեւորվածի վերագնահատում» աշխատության մեջ Ֆ. Նիցշեն խոսում է հոգեբանական հետաքրքիր մի երեւույթի մասին. նա մատնացույց է անում մարդկային հոգեբանության այն առանձնահատկությունը, որ մարդը հակված է կեղծելու, քանի որ կեղծիքով նա ներկայացնում է այն, ինչ կցանկանար, որ իրականում լիներ, բայց հոգու խորքում ինքն էլ գիտի իր «մտահորիզոնի անորոշությունը»: Երբ կողքից, ասես հսկայական լույսի առջեւ, պայծառ եւ հստակ տեսանելի է դառնում ամեն ինչ, վեր է հանվում ճշմարտությունը, մարդն ատելություն է զգում այդ ճշմարտության նկատմամբ, եւ մարդկային հոգին՝ իբրեւ մթնշաղասեր մի չղջիկ, անկախ իր կամքից ատում է ճշմարտությունը՝ որպես արագ կուրացնող լույս[3]: Եւ այս «առաքինիները» հասարակ ժողովրդին, անգիտակից ամբոխին կարող են ուղղորդել ազատ մտածողության դեմ՝ նրան բնորոշելով չար: Վրթ. Փափազյանը գրում է. «Նա՛ է միայն ծառայում ճշմարտության, ով ատելի է ամբոխին... Ծամածռեցիք ասածներս. «ժողովրդի մեծ բարեկամներ» կոչելով ձեզ՝ գլխիվայր հնչեցրիք երգերս ամեն կողմ. հասկացաք ասածներս, բայց չկամեցաք հասկացնել ամբոխին եւ ծաղրի փվիք ըմբոստ ոգու սեգ կոչերը» (էջ 617): Նույն առիթով Ֆ. Նիցշեն ձեւակերպում է. «...ահավասիկ. ես գլխի եմ ընկնում՝ դուք իմ գերմարդուն սատանա՛ էիք անվանելու»[4]: Քարոզելով «բորբոսնած բարոյականություն»՝ այդ «առաքինիները» մարդկանց պարտադրում են պարտականություններ, որոնք ծառայում են հենց իրենց՝ քարոզողների շահերին: «Ամբոխ-հանճար» հարաբերության միջին օղակը, այսպես ասած, «առաքինիները», միջիններն են, կյանքին լավ հարմարված միջինները, որոնց հանգամանորեն անդրադառնում է Ֆ. Նիցշեն նաեւ «Կամք առ իշխանություն» աշխատության մեջ[5]: Ինքրան «Ներաշխարհում» խոսում էր «տեսակ դարձող» որակի մասին, խոսքը միջակությունից անհամեմատ բարձր կանգնած

2 **Վրթ. Փափազյան**, Երկեր, Երեւան, 1987, էջ 617 (այս գրքից հաջորդ մեջբերումների էջերը կտրվեն տեղում):

3 Տե՛ս **Ֆ. Ницше**, նշվ. աշխ., էջ 328:

4 **Ֆ. Նիցշե**, Այսպես խոսեց Զրադաշտը. «Նորք», 1990, թ. 6, էջ117:

5 Տե՛ս **Ф. Ницше**, *Воля к власти, в книге "Так говорил Заратустра. К генеалогии морали. Рождение трагедии. Воля к власти. Посмертные афоризмы"*, Минск, 2003, էջ 898 - 902:

հանճարների մասին է, մարդու բացառիկ որակի մասին, որը երբեք ինքնավերարտադրող տեսակ չի դառնում, ինչպես, ասենք, միջինները՝ «առաքինիների» դասը: Կենսաբանական տեսակ չդարձող մարդու այս որակը բնության քմահաճության խաղն է, եւ որպես օրենք՝ այդ բացառիկները ֆիզիկապես ամուլ են, նրանք «ծնում» են մտքով, բացառիկներ, որոնց Ֆ. Նիցշեն անվանում էր «ազատ մտքեր»: Մարդու այդ որակը շատ բարձր էր դասվում հին հնդկական պետական մեքենայի հիերարխիայում. նրանք կազմում էին իմաստունների, գիտնականների խավը, որն ամենաբարձր աստիճանն էր, նրանց տված գաղափարներն իրականացնում էր երկրորդ խավը՝ իշխանավորների դասը, ավելի ցած առեւտրականների խավն էր, իսկ ամենաստորինը՝ ամբոխը կամ չանդալան՝ չքավորությունը, հասարակության այն խավը, որ շուն է ուտում («չանդալա» բառի կազմության մեջ եւս առկա է «շուն» իմաստը): (Ի դեպ՝ հայերեն ժողովրդախոսակցական «շունուշանգյալ»-ը հիշեցնում է «չանդալա»-ը. խոսքը չքավորության այն աստիճանի մասին է, որի հետեւանքով մարդը դառնում է շնակեր): Սակայն միջինները՝ կեղծ բարեպաշտ «առաջնորդները», ամբոխին կարող են դրդել բացառիկ մեծերի դեմ: Երեւույթի հիանալի պատկեր տվեց Ռ. Զարդարյանը:

«Ցայգալույս» ժողովածուի «Իրբեւ նախամուտ» վերնագրված հատվածում[6] Ռ. Զարդարյանը գրում է, որ ժողովածուն թուրքական բռնատիրության **մթնշաղում** խարխափող հայ ազգի նպատակների, իղձերի ամփոփումն է: Գրքի «Ցայգալույս» տիտղոսը բնականաբար պարունակության խտացումն է: Իսկ ինչ է այն պարունակում: Խոսքը հենց 1910 թ. հրապարակության՝ մամուլում ցրված նյութերը հեղինակի կողմից ի մի բերվելու եւ տպագրության մասին է, ոչ թե հետագա տարիներին Հայաստանում հրապարակվածների, որոնցում կազմողները բազմաթիվ հավելումներ են կատարել: Այն՝ 1910 թ. հրապարակությունը, պարունակում է նիցշեական «Արշալույսի» ենթատեքստով եւ վեդայական «դեռ չբացված ինչքան արշալույսներ կան» խտացման զարդարյանական մեկնաբանություններ: Այս ժողովածուում տեղ են գտել քրեստոմատիական «Գամփռը», «Բագինին փառաբանությունը», «Պահակները արթուն են» եւ նմանատիպ այլ գործեր, որոնցում «նոր արշալույսների» սպասում կա եւ նոր առաջնորդի նկարագիր՝ «գամփռը»: Ժողովածուն ավարտող «Աստվածները» վերնագրված բանաստեղծությամբ ամփոփվում է շարքի ասելիքը. աստվածները, որոնց պաշտել են, այժմ պատկանում են անցյալին, ժամանակին, «աղջամուղջին ու մութին» (հիշենք նիցշեական «Չաստվածների մթնշաղը», Լ. Շանթի «Հին աստվածները», ուր այլեւս հին են բոլոր աստվածները, եւ մարդը պիտի գնա դեպի գերմարդ[7]): «Աստվածները» բանաստեղծության մեջ հովվի խորհրդանշական պատկեր կա, որի սրնգի շուրջ սիմվոլիկ «հոտն» է հավաքվում: Եկել են նոր ժամանակներ՝ նոր առաջնորդների պահանջով, կյանքի վերափոխման պահանջով: Համամարդկային այս անհրաժեշտության հայկական տարբերակն էլ ազգային ազատագրությունն է, թեմա, որը դարձավ նեոռոմանտիզմի հիմնական առանցքը, եւ որին անդրադարձան անխտիր բոլոր հայ նեոռոմանտիկները: Այսինքն՝ «Ցայգալույս»

6 Տե՛ս **Ռ. Զարդարյան**, Ցայգալույս, Կ. Պոլիս, 1910, էջ 5:

7 Տե՛ս **Մ. Շոլինյան**, Լ. Շանթի «Հին աստվածներ» դրաման, Վանաձոր, 2002, էջ 85 - 87:

ժողովածուն սիմվոլիզմին բնորոշ՝ օրվա՝ միմյանց հաջորդող պահերի խորհրդանշական իմաստի մի նոր դիվերգենցիա (ճյուղավորում) է, ուր ցայգն իր խոստացած լույսով խորհրդանշում է մարդկության «նոր առավոտ», իսկ «նոր առավոտը» բերում են հանճարները (առաջնորդները), որոնց «առաքինիները» շրջապատում են ռեսենտիմենտով:

Այնինչ՝ հայասպանյան հրապարակություններում կատարված հավելումները ոչ մի առնչություն չունեն ժողովածուի ներքին կրամաբանության հետ:

Ժողովածուի «Գամփռը» այլաբանական պատկերում գամփռը (հոգում՝ լեռների բարձրությունը եւ մաքուր օդը) լեռներից իջել է քաղաքի աղտեղության մեջ (նույն նիցշեական Զրադաշտի հայտնվելը մարդկանց մեջ), եւ փողոցի անտիրական շների ռոմակը (նիցշեական «մորմերը», «շուկայի ճանճերը», «առաքինիները») հալածում է նրան, քանի որ «փկար ու նուասպ բնազդներու իրր թէ արժանաւորութիւնն է որ ինքզինք այս անհամեմատ բաղդատութեան մէջ վիրաւորուած զգնելով՝ ոտքի կելլէ, կը մրրկի, կը կաղկանձէ»[8]: «Առաքինիները» «բարոյականության» քողի տակ, իրականում «անհամեմատ բաղդատությունից» զազազած, հալածում են ահռելի գամփռին, որ բերել է լեռների թարմությունը, եւ նրա դեմ գրգռում են «սպանդանոցին ամբողջ հրոսախմբին որ գան իրենց օգնութեան հասնին. տարիքոտները կը մեծաբանեն՝ գանգիւնաւոր ու խոպոտ աղաղակով մը, երիտասարդները կ՚սպառնան յանձնապաստանութեամբ մը որ այնքան ծիծաղելի է սակայն, փոքրերը՝ քաջալերուած իրենց մեծերուն համարձակութենէն՝ իրենք ալ իրենց մանկական, տհաս ձայնովը միշտ նոյն անսպատակ ու անգիտակից հայհոյութիւնը կ՚ընեն, վազելով, հեւալով գամփռին եւ եւ որ անհողդողդ, անձնավստահ՝ իր ճամփան կը շարունակէ»[9]: Այս «լուսավախեցող» «առաքինիներն» են, որ մեծերի դեմ «ամբոխային դատաստան» են հրահրում, հյուսում «անօթի շուներու, զրկուած քոթոթներու, դեռ կոյր լակոտներու բոլոր ոստայնն»[10]: Ահա օրենսդիր մեծերի եւ նրանց ռեսենտիմենտով շրջապատողների գեղարվեստական սիմվոլիկ պատկերը: Օրինակները բազմաթիվ են, հիշենք թեկուզ Լ. Շանթի «Հին ասպվածներ»-ում Վանահոր եւ միաբանների հակադրությունը: Իսկ Վրթ. Փափազյանի այլաբանական զրույցներից շատերում է խոսվում այդ հարաբերությունների, ապաբարոյականության եւ առաջնորդի խնդրի մասին:

Ողջ կյանքը եկեղեցուն ծառայած, ջերմեռանդի համբավ ունեցող, շրջապատում առաքինության չափանիշ դիտվողն իրականում կեղծավորի մեկն է, որը մեծ դիրք ունի եւ ազդեցություն՝ շրջապատի վրա: Եւ երբ ամենքին հայտնի է դառնում նրա «վատթարության ապտիճանի առաքինությունը», նա ամբոխին գրգռում է ճշմարտությունը մերկ ներկայացնողի դեմ («Զգայնաչափ», էջ 41-43):

«Վիշապ» զրույցում կեղծիքը բացահայտող ըմբոստ ոգուն նույն «լուսավախեցող» (տերմինը պատկանում է Ֆ. Նիցշեին[11]) «առաքինիները» «խենթ» են որակում (նույն ինքը նիցշեական խենթ իմաստունը «Այսպես խոսեց Զրադաշտը» գրքում) եւ հոչակում

8 **Ռ. Զարդարյան**, անդ, էջ 23:
9 Անդ, էջ 24:
10 Անդ, էջ 28:
11 Տե՛ս **Ф. Ницше**, *Переоценка всего ценного*, էջ 328:

«այլանդակ մտքեր արտահայտող»: Իսկ երբ իր շահը չգիտակցող կատաղած ամբոխը հալածում է մեծ մտածողներին, նրանց վտարում դեպի բարձր լեռների մաքուր օդը՝ ինքը մնալով գարշ ճահճում, «առաքինիները» «բացատրում» են նրան, որ խենթերը, «կռվելով» իրենց՝ «առաքինիների» դեմ, միայն վնասում են ամբոխին: (Իզուր չէ, որ այս թեման՝ «մթնշաղասեր չղջիկի», արդարամիտ անհատականության (ինդիվիդումի) եւ ամբոխի հարաբերությունը նաեւ «բեմականացվել», «թատերականացվել» եւ այնպես տեսանելի է դարձվել Վրթ. Փափազյանի գրչի տակ. նկատի ունենք «Ժայռը» դրաման, ուր անմիտ ամբոխը (գյուղացիները), չգիտակցելով իր շահը, ջուր է լցնում «ժայռի»՝ աղայի ջրաղացին, իսկ արդարության հետամուտ իրավաբանը հայտնվում է կեղծիքի, խորամանկության եւ խարդախության ոստայնում): Ինտրան եւս իր «Ներաշխարհում» խոսում է այն մեծերի մասին, ում ծաղրելի ու ծիծաղելի են պիտակել լուսափայլ մտածողությամբ ժամանակից առաջ անցնելու, հեռուն տեսնելու, իրենց գաղափարներով հասարակության առաջադիմությունը պայմանավորելու համար: Ինչ հոգեբանական մեխանիզմ է գործում այս մտածելակերպի եւ դրանից բիծող գործողությունների խորքում:

Սովորաբար նման մեծերը, եթե ոչ հարյուրամյակներ, առնվազն մի քանի տասնամյակ իրենց ժամանակից առաջ են անցնում (օրինակ՝ Ջ. Բրունոն), նրանք ահռելի են, լուսափայլ: Այդ ահռելիությունն ահ է ներշնչում միջիններին, որոնք իրենց զգում են ստվերում: Սակայն այս միջակ «առաքինիները» զարմանքով նկատում են, որ նման մեծություններն իրենց ահռելիությամբ, որին բնորոշ է վեհի գեղագիտությունը, **վտանգավոր չեն, նրանց բնորոշ է բարություն եւ լույս, մանկան պարզություն եւ անմիջականություն** (Պ. Սեւակի բնորոշմամբ՝ Անվտանգ՝ ինչպես հրդեհն արեւի, Անվնաս՝ ինչպես օգտակար լորտուն[12]...), եւ ըմբռնում են, որ անտեղի էր վեհի՝ իրենց կողմից իբրեւ սարսափելու ընկալումը (չէ՞ որ վեհի գեղագիտական հակադրությունը սարսափելին է, այնպես, ինչպես գեղեցիկի գեղագիտական կարգը սերտ կապի մեջ է իր հակոտնյայի՝ տգեղի հետ), իսկ այս անսպասելիությունից (այսինքն՝ վեհն ու սարսափելին իրարից տարանջատելուց) ծնվում է կոմիկականը՝ իբրեւ գեղագիտական կատեգորիա: Եւ վերջնական արդյունքում վեհն ընկալվում է իբրեւ ծիծաղելի: Սեւակից վերը բերված երկտողն իսկ հաստատում է կոմիկականի ծնունդը. նման մեծերին «օձ» են պատկերացնում եւ սարսափում, բայց պարզվում է, որ նրանք օգտակար են, «անվնաս լորտու», լորտուի օգտակարությունն այլեւս մոռացվում է, զարմանքից ծնվում է ժպիտ, ծիծաղ, որը շաղախվում է վրեժխնդրության թույնով, քանի որ «առաքինիների» հոգու խորքում գլուխ է բարձրացնում ռեսենտիմենտը, եւ ժպիտը վերածվում է հեգնանքի ու ծաղրուծանակի:

Միջինների մասին շատ հետաքրքիր տեսակետ է դրսեւորված Վրթ. Փափազյանի «Արձանը» այլաբանական զրույցում:

Հրապարակում, ուր մարդիկ միշտ ժողովվում են, հսկայական կաղնու տակ մերկ կնոջ պղնձյա մի արձան է դրված: Այն գայթակղում է բոլոր «պատկառելի մարդկանց», որոնք մերկ ոչինչ տեսնել չեն սիրում (էջ 106): Սրանք Նիցշեի բնորոշած «առաքինիներն»

12 **Պ. Սեւակ**, Երկեր երեք հատորով, հ.1, Երեւան,1982, էջ 570 («Վարք մեծաց»):

են, ի ցույց ամենքի «պապենական» օրենքներով շարժվողները, սակայն իրականում՝ կեղծավորներ: Քանիցս հասարակությունը, իլու իրեն պարտադրվող «պապենական օրենքին», փորձել էր փշրել արձանը, բայց խանգարել էր մի ավելի հզոր բան, որ առավել հզոր էր գիտակցված կեղծիք պարտադրող կեղծավորների ազդեցությունից. դա նախապաշարմունքն էր, սնահավատությունը: Ասված էր, որ արձանի անհետացմանը կհաջորդեն չարիքներ: Ասված էր, եւ պետք է այդպես դարերով էլ չշարժվեին տեղից, մնային ճահճում: Տեսնել էր պետք ժողովրդին պատած այն սոսկումը, երբ մի օր հանկարծ տեսան, որ արձանը չկա: Արձանի անհետացման վախից, ներշնչանքից դրան նահապետը տեղնուտեղը կաթվածահար եղավ, մի խոսքով՝ ողջ քաղաքում հոգեբանական քաոս էր:

Արձանն իր գոյությամբ, փաստորեն, մարդկային մտքերում, հոգիներում հաստատել էր կարգ ու կանոն: Այն խորհրդանշում է մերկ ճշմարտություն, ճշմարտության անհրաժեշտություն, որի դեմ այնպես ռեսենտիմենտով էին լցված «առաքինիները»: Արձանի՝ ջրհորի հատակում անհետանալուց հետո քաղաքում անասելի չարություն տարածվեց. միմյանց դեմ դավեր էին նյութում, մարդկանց միջից հեռացել էր արդարության զգացումը, ամենուր թշվառություն էր: Սակայն ժամանակ անց նորից ինչ-որ խենթ ջրհորի հատակից փորձում է վեր հանել մերկ արձանը՝ մերկ ճշմարտությունը: Մարդիկ, որ հարմարվել էին առանց ճշմարտության ապրելու, հիմա էլ կտրուկ դեմ են արձանը հանելուն, իսկ «բարոյագետները»՝ կեղծ հովիվները, կեղծ բարեպաշտները, նորից քարոզում են արձանի դեմ: Սակայն ճշմարտությունը երկար թաղել հնարավոր չէ: Խենթերը այն նորից հանում ու դնում են մեծ կաղնու տակ:

Ինչն է հետաքրքիր այս ֆարուլայում: Այստեղ ամբոխ-հանճար (առաջնորդ) հարաբերության մեջ էական դեր է խաղում միջին օղակը՝ միջինները, կեղծիք սերմանողները, որոնք, իրենց նպատակներում համոզված, ուղղորդում են անմիտ ամբոխին՝ «արածող նախրին» (Փափազյան), «ոչխարի հոտին» (Նիցշե), «կայծակնահար նախրին» (Չարենց): Իհարկե, ամբոխի այս «գեղարվեստական» բնորոշումը՝ «հոտային», գռեհիկ է հնչում, սակայն հոգեբանության դիտանկյունից սա ընդամենը նշանակում է ենթագիտակցականի, բնազդների անգուսպ դրսեւորում, երբ կույր, չարթնացած մտքով, ինքնագիտակցության չհասած մարդկային բազմություններ կարող են «ամենօրյա գործածության առարկա» (Նիցշե) դառնալ՝ ծառայելով իշխող դասի շահերին:

Անհատականության (ինդիվիդումի) չհասած, ինքնուրույնություն չունեցող, ամբոխային նախապաշարված, քարացած մտածողությունը հետազոտվել եւ հիանալի մեկնաբանվել է բազմաթիվ հոգեբանների կողմից (Զ. Ֆրեյդ, Կ. Յունգ, Վ. Ռայխ...): Վ. Ռայխը տարբերակում է բնավորության (ի դեպ՝ ըստ Վ. Ռայխի՝ բնավորությունը տարիների ընթացքում ձեւավորվող արտաքին աշխարհից պաշտպանվելու միջոց է) երեք տիպ՝ գենիտալ, նեւրոտիկ եւ էմոցիոնալ ժանտախտով տառապող[13]: **Գենիտալ բնավորությունը** բնորոշ է անձի զարգացման վերջնական փուլին: Այն, եթե բնորոշենք Ա. Մաս-

13 Տե՛ս **Վ. Ռայխ**, Էմոցիոնալ ժանտախտ. «Գարուն», 2002/2, էջ 24 - 29 եւ http://psycho.dtn.ru/txt/reich/reich004.htm

լոուի դրդապատճառների տեսությամբ[14], բնորոշ է **ինքնադրսեւորման, ինքնահաստատման եւ ինքնագերազանցման հասած անձանց**: Այս բնավորությունը հստակ զանազանում է կարեւորն անկարեւորից, ամեն ինչ տեսնում է խորքային՝ ի տարբերություն ռացիոնալ մտածողության, որը միայն տեսանելի փաստերի հետ է հաշվի նստում: Այս բնավորությունն ունի շատ խոր սիրելու կարողություն, սիրո մեջ նա չի ձգտում ո՛չ տիրելու, ո՛չ տրվելու (սադիզմ, մազոխիզմ)[15]: Նա ի վիճակի է երջանիկ լինելու եւ երջանկացնելու, նա փնտրում է փոխըմբռնում: Բնավորության այս տեսակը հասարակական հարաբերություններում ձգտում է առավել բարձր մակարդակի, մարդու ազատության եւ հոգու խաղաղության: Նա լայնախոհ է եւ կարեկից, խոր ցավ է ապրում մարդու, մարդ արարածի համար, տառապում եւ որոնում փրկության ելք, ուղի:

Նեւրոտիկ բնավորությունը չափազանց մոտ է գենիտալին, սակայն խոր սիրո որոնման ճանապարհին նա չի հավատում երջանկության եւ հոգեպես շարունակ ընկճված է, արգելակված: Կարող է քարոզել բարձր գաղափարներ, սակայն երբ դրանք պետք է իրականություն դարձնել, նա նույնիսկ կատաղի դիմադրություն է ցուցաբերում, քանզի ենթագիտակցաբար վախենում է նորից, անորոշից: Իր կատաղի դիմադրությամբ նա ձուլվում է բնավորության երրորդ խմբին՝ էմոցիոնալ ժանտախտով տառապողների հսկայական բանակին: Սակայն, ի տարբերություն վերջիններիս, նեւրոտիկն օժտված է համեմատաբար թույլ «կենսակործանարար հասարակական ակտիվությամբ»: Գենիտալ մտածողության նման էմոցիոնալ ժանտախտով տառապողի մտածողությունը եւս լիովին համապատասխանում է իր գործողություններին՝ ի տարբերություն նեւրոտիկի: Սակայն էմոցիոնալ ժանտախտով տառապողների մտածողության ընթացքը, կուռ դատողությունը դեռ վերջնակետի չհասցված, արդեն եզրակացությունները պատրաստ են. էմոցիոնալ ժանտախտակիրն ի վիճակի չէ հստակ սեփական դատողության եւ վերլուծության, նա անմիջապես հանգում է իռացիոնալ որոշման՝ **նախապաշարմունքի, կանխակալ տեսակետի**, որը գալիս է «պապականից», ավանդականից: Դենց դրանով փորձում է «մեկնաբանել» կամ հաստատել իր «ըրամաբանության» եղանակը: Ժանտախտավոր մտածողությունը սուր վարակիչ է (այստեղից է Վ. Ռայխի եզրույթը՝ «էմոցիոնալ ժանտախտ»), այն «ունի ահռելի հասարակական հետեւանքներ, լայն տարածում եւ գործնականում այն երեւույթների հոմանիշն է, որ անվանվում են սովորույթ եւ ավանդույթ»[16]: Փաստորեն՝ ժանտախտավոր մտածողությունը նախապաշարված, անհանդուրժող դիրքորոշում ունի, քանի որ «չի հանդուրժում այնպիսի ռացիոնալ մտածողություն, որը կարող է վերջ տալ իրեն»[17]: Սա՝ **մտածողության** մեջ:

Վ. Ռայխը նկարագրում է նաեւ այս բնավորությունների դրսեւորումը **գործունեության մեջ**: Գենիտալ մտածողությունն ու գործունեությունը ներդաշնակ են, գոր-

14 Տե՛ս **A. Maslow**, Motivation and Personality. New York, Harper, 1970.
http://www.atheism.about.com/library/glossary/general/bldef-maslowabraham.htm
http://www.who2.com/abrahammaslow.html

15 Տե՛ս **Վ. Ռայխ**, անդ:

16 Անդ, էջ 26:

17 Անդ:

ծունեություն, որի վերջնական նպատակը և՛ իր՝ գենիտալ բնավորության, և՛ ուրիշների վիճակի բարելավումն է, հասարակական հարաբերությունների առավել կարգավորված ու ներդաշնակ մակարդակի հասնելը: Նեւրոտիկը գործնական չէ, բայց ու առաջընթացը չի կասեցնում, նա պասսիվ է: Իսկ էմոցիոնալ ժանտախտով վարակվածի պարագայում իրավիճակը բոլորովին այլ է: Նա խանգարում է հասարակական առաջընթացին, քանի որ նախապաշարված է, սնահավատ, ու մտածողության հիմքում «պապական» ավանդներն են՝ քարացած սովորույթները: Նա երբեք նորարար չէ ու դեմ է «պապականին» հակասողին: Այս տիպի մարդկանց խոսքն ու գործը երբեք միմյանց չեն բռնում: Նրանց գործունեության շարժառիթը՝ թե՛ գիտակցական, թե՛ ենթագիտակցական, կեղծիքն է, ինչ-որ բան ցուցադրելը՝ ի շահ իրեն, բայց ոչ երբեք ճշմարտությունը: Այստեղից էլ՝ նրանց խոսքի ու գործի հակասությունը: «Հայտարարվածը երբեք չի համապատասխանում իրականին... Նրա համար այս կերպ գործելը այնքան բնական է, որքան սիրո կարիքը՝ գենիտալ բնավորության պարագային»[18]: «Էմոցիոնալ ժանտախտ» եզրույթով Վ. Ռայիխը բնորոշում է **երեւույթ**, որը **հասարակական հիվանդություն** է, քանի որ «ժանտախտով կառավարվող անհատները համախմբվում են հասարակական խմբերով (Վ. Ռայիխը՝ որպես ֆրեյդիզմի հետեւորդ, հանգամանորեն բացատրում է նաեւ այս երեք բնավորությունների բուն առանցքը՝ այն հոգեկերտվածքը, որը ձեւավորվում է ինչ-ինչ սեռական մղումներով: Մեզ համար էական է երեւույթի հասարակական կողմը): Այսպիսի խմբերը դառնում են հասարակական կարծիքի կենտրոններ, որոնց բնորոշ է բնական սիրային կյանքը ծայրահեղ կերպով չհանդուրժելը: Այդպիսի կենտրոնները քաջ հայտնի են ու ամենուր կան: Նրանք դաժանորեն հետապնդում են բնական սիրային կյանքի ցանկացած դրսեւորում՝ թաքնվելով «մշակույթ ու բարոյականություն» բառերի ներքո: Կլինիկական հետազոտությունները կասկած չեն թողնում,- շարունակում է Վ. Ռայիխը,- որ ժանտախտավոր մարդկանց այդ շրջանակների համար բամբասանքն ու զրպարտությունը սեռական բավարարվածություն ստանալու այլասերված միջոցներ են: Այս կերպ սեռական բավարարվածությունը ձեռք է բերվում բնական գենիտալ գործառույթների բացասումով»[19]: Պետք է եզրակացնել, որ այս տիպի մարդկանց առաջին բնորոշ հատկանիշը մարդկայնորեն (կամ ասվածորեն) սիրելու կարողությունից զուրկ լինելն է: Մնացած ամեն բան բիում է այստեղից: Վ. Ռայիխը, երկարատեւ հետազոտություններից ելնելով, նշում է այն ատելությունն ու թշնամանքը, որ ժանտախտակիրների հասարակությունը տածում է ազատ, սթափ մտածողության դեմ կամ հասարակական դրական բարեփոխումների հանդեպ[20]: Ժանտախտակիրների հասարակությունը ձեւավորվում է Նիցշեի նշած միջինների «հոտային խմբերի» շնորհիվ, որոնց թվաքանակի հանդեպ անհատականությունները հաճախ իրենց զգում են անօգնական: Հանճարի, բացառիկ անհատի (օրենսդիր իմաստով) ու ամբոխի կամ ժանտախտակիրների հակասությունը գալիս է վերոշարադրյալ հոգեբանական արմատներից:

18 Անդ, էջ 27:
19 Անդ, էջ 29:
20 Տե՛ս անդ:

Եւ միանգամայն հասկանալի է դառնում Վրթ. Փափազյանի «Ըմբոստ երգերում» կամ սիմվոլիկ զրույցներում («Ինչո՞ւմն էր ուժը», «Անհագը»...) հերոսների՝ խոր սիրելու կարողությունից բխող ճշմարտության որոնումը եւ մարդկության համար ուղու փնտրտուքը: Այդ մեծ կարեկիցներն ու տառապողները բխեցնում են լույս, այնինչ իրենք շրջապատված են լինում ժանտախտակիրների ատելությամբ, կամ որ ավելի ճիշտ է՝ ռեսենտիմենտով: Նիցշեի «Այսպես խոսեց Զրադաշտը» աշխատության խենթը՝ ամբոխից վեր կանգնածը, մարգարեն, նույն գենիալ բնավորությունն է, նույն մեծ սիրողն ու տառապողը: Նկատված է, որ բոլոր մեծագույն մտածողները (Վ. Գյոթե, Լ. Տոլստոյ...) սարսափելի մենակության զգացողություն են ունեցել[21]: Հանճարի մենակության եւ նրա տառապանքի մասին խորքային վերլուծումներ է տվել նաեւ Ն. Բերդյաեւը[22]. բացառիկ հոգեկերտվածքը ճգնակեցությամբ (մենակությամբ) «հեռանում» է այս աշխարհից եւ ստեղծագործելու, արարելու բնատուր ձիրքով օժտված իր ներաշխարհում հայտնաբերում «ուրիշ աշխարհ»՝ դրանով իսկ բերելով նորը՝ հանճարեղը: Այսինքն՝ Ն. Բերդյաեւը եւս բնութագրում է գենիտալ բնավորությունը: Նա խոսում է նաեւ սրբի մասին՝ որպես բացառիկության մի այլ դրսեւորման՝ ընդգծելով, որ սուրբը միայն ձգտում է ներքին կատարելության, բայց ոչ իրականության վերափոխման, ինչը հանճարի վերջնական նպատակն է: Այսինքն՝ սուրբը, ըստ Բերդյաեւի բնութագրման, նույն նեւրոտիկի բնավորությունն է՝ ոչ ակտիվ հասարակական միտվածությամբ:

Դառնանք Վրթ. Փափազյանի «Արձանին»: Մերկ արձանը նորից կանգնեցվում է իր տեղում, իսկ նիցշեական «առաքինիները», որ նույն էմոցիոնալ ժանտախտով տառապողներն են, կեղծ բարոյապաշտությամբ պահանջում են մերկությունը (ամեն ինչի) հեռացնել, այն մերկությունը, որը կուրացնում է իր խորքում պարունակվող լույսի առատությամբ: «Մթնշաղասեր չղջիկները» (Նիցշե)՝ ժանտախտակիրները, լցված ոխերիմ ատելությամբ, ռեսենտիմենտով, անմիտ ամբոխին դրդում են իմաստունի դեմ, եւ ստեղծագործությունն ավարտվում է ճշմարտության մարտիկի մահով: Նույն գաղափարն է վեր հանված նաեւ «Ըմբոստի մահը» զրույցում: Իսկ «Անհագը» փիլիսոփայական այլաբանությունն ավարտվում է հեղինակային այնպիսի մեկնաբանությամբ, որը վերաբերում է ոչ միայն այս զրույցին, այլ, կարելի է ասել, ամփոփում է եւ «Ըմբոստի մահը», եւ «Արձանը», եւ «Ըմբոստ երգերի» ու այլ բազմաթիվ գործերի ասելիքը: Վրթ. Փափազյանը նշում է, որ գիտակցության կրակ գողացող Պրոմեթեւսը, «հունական Տանտալոսն ու արաբական իմաստունը սիմվոլներ են այնպիսի նահատակների, որոնք ձգտում են միեւնույն բարձր նպատակին, ըմբոստանալով եղած ապականության դեմ, որոնք քայլում են փշերի վրայով, տանջանքների միջով» (էջ 95) ու քարոզում բացարձակ անկեղծություն եւ նոր բարոյականություն: «Ըմբոստ երգերում» Փափազյանը գրում է. «Ըմբոստ ոգին չի՛ լռում: Վաղ թե ուշ՝ նրա խոսքերը կամուրջ պիտի լինեն, պատվանդան, որի վրա պիտի կանգնի ապագա ազատ հայրենիքդ եւ վսեմացած մարդկության առաջին

21 Տե՛ս **Н. А. Бердяев**, *Философия свободы, Смысл творчества*, М., 1989, էջ 394:
22 Տե՛ս անդ, էջ 382 -399:

հիմնաքարը» (էջ 620): Փաստորեն՝ Փափազյանը գովերգում է նիցշեական հզոր կամքով գերմարդուն՝ մարդուց Մարդ ընկած ուղին, որը կամուրջ է դեպի ապագա:

Ասացինք, որ «առաքինիներն» ամեն բան անում են կեղծիքը որպես իրականություն ներկայացնելու համար: Այդ խաբկանքի մեջ ապրում են և՛ իրենք, և՛ ամբոխը՝ փափազյանական «արածող նախիրը», որի գլուխը դժվար է մի բան մտցնել, իսկ քարացած մտակաղապարները փոխելը գրեթե անհնար բան է: Արևելյան ասացվածքը հուշում է. «Ավելի հեշտ է հոսող ջրի վրա հարյուրավոր ձու իրար գլխի ուղղահայաց շարել, քան՝ հիմարին բան հասկացնել»: Ամբոխի անգիտակից կամ ենթագիտակցական ապելությունը դեպի բացառիկ մեծերը, որ «առաքինիների» կողմից ուղղորդման արդյունք է, շատ պարզ կարելի է մեկնաբանել հետեյալ հոգեբանական դիտարկմամբ:

Հայտնի է, որ Կիլիկյան Հայաստանը կործանվեց մամլյուկների կանոնավոր արշավանքներից: Մամլյուկների շարքերում կային այնպիսի ջոկատներ, որոնք կազմվել էին տարիներ առաջ գերի տարված քրիստոնյաների որդիներից: Սպանելով նրանց ծնողներին՝ քրիստոնյա երեխաներին մահմեդականները ներշնչել էին, թե նրանց ծնողներին սպանել են քրիստոնյաները, իսկ իրենք մուսուլմաններ են՝ որբացած մուսուլմաններ: Այսինքն՝ անգիտակից երեխաներին հատուկ դաստիարակությամբ դարձնում էին դաժան զինվորներ եւ նրանցից կազմված հատուկ ջոկատներն ուղղում հե՛նց քրիստոնյաների դեմ, այսինքն՝ անգիտակից, խաբված մարդկանց հանում էին հե՛նց յուրայինների դեմ: Նույն փորձը հետագայում որդեգրեցին թուրքերը՝ կազմելով ենիչերական ջոկատներ, որոնցում մեծ թիվ էին կազմում քրիստոնյաները, որոնք բոլորովին գաղափար չունեին իրենց ծագման մասին: «Առաքինիների» կողմից ենիչերական ջոկատներ կազմակերպվել են բոլոր ժամանակներում, բոլոր երկրներում՝ դրանք առավել շատ ուղղորդելով սեփական ժողովրդի դեմ: Ապացույց՝ Արտաշեսի (այն էլ «Բարի» հորջորջված) անեծքով «չար» որակվեց արդարության մարտիկ Արտավազդը, իսկ «արածող նախիրին» ինչ-որ կեղծիք ներշնչելը երբեք էլ իշխանության համար դժվար գործ չի եղել: Այսինքն՝ Արտավազդը դարերում «վաստակեց» «չարի» անուն: Սա հավերժական թեմա է: Ճշմարտությունը բացահայտելը ամենքին չէ տրված: Որեւէ հարցի խորքը թափանցելու համար, ըստ Ռ. Շտայների, պետք է «ոգու աչքերով» նայել, իսկ դա նշանակում է, մինչեւ ճշմարտություն թափանցելու համար, «անկանխակալորեն» «դատարկվել»: Մարդ-անոթը տարիների ընթացքում շարունակ լցվում է այն ամենով, ինչ հանգամանքների բերումով տրվում է նրան, մինչեւ որ հասնելով ինդիվիդումի՝ անհատականության, նա ինքն է արդեն ընտրում այն, իչով լցվելու է կամ իր ներսից դուրս թափում այն, ինչ իրեն պետք չէ: Կրոնական տեսանկյունից մկրտության ժամանակ ընտրվող կնքահայրը՝ հոգեհայրը, ունեցել է հենց այս դերը. նա՛ պետք է իր սանի դաստիարակությամբ զբաղվեր, նա պատասխանատո՛ւ էր իրեն վստահված անձի ձեւավորման համար, նա՛ էր պատասխան տալու մարդ-անոթը ինչ-որ բանով (դրական թե բացասական) լցնելու համար: Ավելի հեշտ է լցնել «մարդ-անոթը», քան պարունակությունը փոխել. ավելի հեշտ է դաստիարակել, քան վերադաստիարակել.- սա հայտնի ճշմարտություն է: Բնականաբար անգիտակից ամբոխին ներշնչած որեւէ գաղափար շատ դժվար է փոխել: Իզուր չէր Ֆ. Նիցշեն նշում,

թե ճշմարտությանը հասնելու ուղին սկսվում է «նախկինում ճշմարտություն համարվածի նկատմամբ կասկածից», մի բան, որին ընդունակ են բացառիկ անձինք, բացառիկ նորաբար անհատականություններ, ովքեր առաջ են մղել մարդկային մշակույթը: Նորարար անհատականության՝ ազատ ոգու եւ բազմության՝ ամբոխի մտածողության տարբերությունը հստակ բնորոշել է նաեւ Ռ. Շտայները. «**Ազատ ոգին** գործում է՝ ելնելով իր մղումներից, այն է՝ ինտուիցիաներից, որ մտածողությամբ ընտրված են նրա գաղափարների աշխարհի ամբողջությունից: **Անազատ ոգու** համար իր գաղափարների աշխարհից որոշակի ինտուիցիա որեւէ գործողության հիմքում դնելու նպատակով առանձնացնելու պատճառը նրան տրված ընկալումային աշխարհն է, այսինքն՝ նրա մինչ այդ ունեցած ապրումները: Նախքան վճիռ կայացնելը՝ նա հիշում է, թե համանման դեպքում ով ինչ է արել կամ անելու, հավանություն տվել, կամ թե այդ դեպքի համար Աստված ինչ է հրամայել... եւ գործում է ըստ այդմ: Ազատ ոգու համար այս նախապայմանները գործելու միակ խթանները չեն: Նա պարզապես կայացնում է **առաջին** վճիռը: Ընդսմին, նրա համար միեւնույն է, թե նման դեպքում ուրիշներն ինչ են արել կամ դրա համար ինչ են հրամայել»[23]:

«Ընբոստ երգերում» Վրթ. Փափազյանը սրտի ցավով փորձում է վերլուծել որոշ բարոյական արժեքներ՝ «եղիր համեստ», «եղիր խոնարհ», «եղիր բարի», «եղիր համբերող» եւ այլն, որոնք ամբոխի «դատարկ անոթի» մեջ լցրել են՝ սոսկ իրենց նպատակներին ծառայեցնելու համար, նրան վարժեցնելով պարտականությունների եւ ոչ մի իրավունքի: Պարզապես «Ընբոստ երգերում» Փափազյանի գրելաոճը արտաքուստ կոպիտ է, ինչպես Ավ. Իսահակյանի «Արու-Լալայի»՝ ամեն ինչ ժիտող պաթոսը, ինչպես նիցշեական պարադոքսալ ոճը, այնինչ՝ վերոհիշյալ հեղինակների բոլոր էջերում էլ խոր ցավ կա մարդու համար, ցավ, որից այլոց համար լույս է բիռում՝ նոր ուղու, ճանապարհի պահանջ:

Վրթ. Փափազյանի «Խելոք աքաղաղներ» գրույցում ապականված բարքերը վեր են հանվում այլաբանական սիմվոլներով, ներկայացվում է ամեն ինչ սեփական շահերին ծառայեցնելու եւ շահագործելու մեխանիզմը:

Տերը մորթում է ընբոստ հավերին, իսկ որը կարողանում է փախչել, փրկվում է, ազատ ապրում լեռներում: Մնացածներից պահանջվում է չմորթվելու համար չհամարձակվել մտածել ազատության մասին: Վեր է հանված կառավարման նենգ ու կեղծավոր ատիճանակարգությունը:

Մեկ այլ («Անհագը») գրույցում հանճարին (առաջնորդ իմաստով) փառաբանող ամբոխը «օվսաննա» է գոչում, սակայն վախենալով «դանակ բռնող ձեռքերից»՝ նույն ամբոխն սկսեց «ի խաչ» գոչել, ինչպես Քրիստոսի օրերում: Նախապաշարված ամբոխի կամ «խալիսի» (Հովհ. Թումանյանի խոսքով)[24] կաղապարված մտակառույցներում շատ խոր ամրակայվում են սկզբնական տպավորությունները, դրանք հետագայում փոխելն ապարդյուն ջանք է: Ասվածի լավագույն օրինակներ են Հովհ. Թումանյանի երկու գոր-

23 **Ռ. Շտայներ**, Ազատության փիլիսոփայություն (Ժամանակակից մի աշխարհայեցողության հիմունքներ: Հոգեկան դիտարկման արդյունքներ ըստ բնագիտական մեթոդի), Երեւան, 1998, էջ 132:

24 Տե՛ս «Թումանյան. ուսումնասիրություններ եւ հրապարակումներ», հ. 4, Երեւան,1985, էջ 367:

ծեր՝ «Մուկիկի մահը» եւ «Մի կաթիլ մեղրը», ուր էմոցիոնալ ժանրախտը դրսեւորված է մերկապարանոց՝ իր կենսակործան ուղղվածությամբ:

Մուկիկը մեռավ («Մուկիկի մահը»): Ծտի ողբի վրա Լորը եկավ եւ իմացավ, թե «Աշխարքն էսպես մնաց անտեր»[25]: Ծառն իմացավ այդ մասին, եղավ «ճղնակոտոր», քանի որ Լորն էլ վշտից թեւը կոտրել էր: Եւ նույն էմոցիոնալ ժանրախտով բռնված, իրար նայելով, «պապական» օրենքներն առանց վերանայելու, «ընկերով մահը հարսանիք է» սկզբունքով քարերը «գըլտոր-մըլտոր» թափվեցին ջրերի մեջ, ջրերը պղտորվեցին, պառավն իրեն ծվատեց հայկական տարբերակով՝ «մազաքնում» եղավ... Մուկիկի պես մարդու մահվան պատճառով ողջ գյուղն եկավ այն եզրակացության՝

«...Էլ ո՞վ մընաց էս աշխարքում,
Էլ ի՞նչ ապրենք էս աշխարքում...»:
Էսպես ասին
Ու միասին
Լացով, կոծով,
Ճիչ - գոռոցով
Հավաքվեցին ու գնացին,
Քարիցն ընկան կոտրվեցին[26]:

Ամբոխի ենթագիտակցական անկառավարելի բնազդներն այստեղ կենտրոնացվեցին հենց իր՝ ամբոխի դեմ՝ իրենց սնահավատությունից, նախապաշարված լինելուց, միմյանց նայելու, կրկնօրինակելու եւ կաղապարված, ոչ ազատ մտածողության պատճառով: Եւ վնասեցին իրենք իրենց: Բայց ավելի սոսկալին էլ կա, թե ինչպես «առաքինիները», արթնացնելով ամբոխի բնազդները, կարող են մարդկային մեծ բազմություններ ուղղորդել իրար դեմ՝ պետությունների, համաշխարհային պատերազմների մասշտաբով: Ահա «Մի կաթիլ մեղրը»:

Ամեն ինչ սկսվում է այնտեղից, երբ խանութ է մտնում «մի զըռ չոբան»: Եթե խանութպանը հարվածում է կենդանու՝ կատվի, «զըռ չոբանը»՝ մարդու: Իսկ վրա հասած գյուղացիներն էլ որեւէ պատճառ չեն հարցնում. մեկը մյուսից հետ չմնալու կարճամիտ մրցավազքով, իրար նայելու հոտային բնազդով նրանք սպանում են «զըռ չոբանին», քանի որ իրենք էլ այնքան հեռու չեն «զըռ» - ից: Նույն հոգեբանական ժանրախտին գերի, անսիրտ սադիզմով (Վ. Ռայիսը խոսում է այն մասին, որ ժանրախտակիրների հասարակությանը բնորոշ է նաեւ սադիզմը. դրանից նրանք յուրովի հաճույք են ստանում, բավարարում ոխի, քենի զգացողություն[27], առանց բանականության ձայնին ականջ դնելու, առանց ռացիոնալ դատողությամբ վերջնակետին հասնելու, կանխակալ, մշուշված նեռաշխարհին բնորոշ «բարոյական» նորմերը պահպանելու միտումով «ջարդեցին իրար, Ջընջեցին իրար, Կոռան, գընացին Գեղնին հավասար»[28]: Իսկ երբ «ծաղկած երկիրն

25 Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Երկեր, Երեւան, հ. 1, 1958, էջ 254:
26 Անդ, էջ 257:
27 Տե՛ս **Վ. Ռայիս**, Էմոցիոնալ ժանրախտ, էջ 24 - 29:
28 **Հովհ. Թումանյան**, Երկեր, հ. 1, էջ 261:

ամայացավ», նույն նեղմիտ «առաքինիները», շուրջը դիտելով, տեսան սոսկ այն, ինչ տեսան (եւ ոչ պատճառահետեւանքային կապերը, որ կան ամեն բանի խորքում), ու զարմացան.

Թե ո՞րտեղից արդյոք ծագեց
Էս ընդհանուր աղետը մեծ[29]:

Ճարտասանական հարց, որը պատասխան չունի, քանի որ «առաքինիների» մտածողության սահմանը, ինչպես Ֆ. Նիցշեն է բնութագրում, չի կարող հաղթահարել ինքն իրեն, իր գոռոզամտությունը եւ խոստովանել, որ իսկական առաջնորդները ձգտում են համամարդկային երջանկության, ոչ լոկալ, տեղայնացված նեղ շահերի, որից բիում է ամեն մի չարիք: Քանի որ նրանք այն «առաջնորդներից» են, որոնք «աշխարհը բուռն են հավաքել» ու ծիծաղում են աշխարհի վրա: Մեծ լռեցին այս հարցին եւս պատասխան ունի: Մի առիթով նա նշել է, թե իր լավագույն սիմվոլիկ ստեղծագործությունը «Քաջ Նազարն» է: Թումանյանի «Քաջ Նազարի» «սիմվոլը» հայտնի է ամենքիս. այն հավերժական թեմա է՝ քաջնազարականությունը՝ առաջնորդի իր տիպով, առաջնորդ՝ իրեն արժանի ստորադասների ամբողջությամբ՝ մինչեւ ժողովուրդ՝ ամենքը վարակված էմոցիոնալ ժանտախտով: Բոլորը հավաքված մի նավի վրա, որի առագաստները պարզված են... քամուն, քանզի առաջնորդներն ուտում-խմում են... Իսկ նավի վրա փափազյանական «Մարդագայլը» զրույցի բարքերն են՝ homo homini lupus (մարդը մարդուն գայլ): Ահա եւ էմոցիոնալ ժանտախտով տառապող ամբոխն իր գայլային բարոյականությամբ:

Վրթ. Փափազյանի, Վ. Թեքեյանի, Լ. Շանթի, Ինտրայի, Ռ. Զարդարյանի, Ե. Չարենցի... բազմաթիվ այլոց եւ հատկապես Ֆ. Նիցշեի ստեղծագործություններում անսահման տառապանք կա հենց այս անգիտակից ամբոխի՝ նույն մետերլինկյան կույրերի նկատմամբ:

Փորձելով ամփոփել ԺԹ.-Ի. դդ. սահմանագծի գրականության հիմնական միտումներից մեկի՝ ապաբարոյականության եւ առաջնորդի հարցի քննությունը Վրթ. Փափազյանի այլաբանախորհրդանշական ստեղծագործություններում, պետք է նշել, որ նա եւս Ֆ. Նիցշեի, Ինտրայի, Վ. Թեքեյանի, Լ. Շանթի, Հովհ. Թումանյանի եւ այլոց պես շոշափում է համամարդկային հնչեղության հարցեր՝ մարդու ապագան տեսնելով դեպի «գերմարդ» հոգեւոր երեւույթը գնալու մեջ, սակայն, ինչպես արեւելահայ բազմաթիվ հեղինակներ (որոնց շարքում Վ. Տերյանը, Ե. Չարենցը) Վրթ. Փափազյանն օրվա խնդիր տեսավ ընկերվարական հեղափոխությունը՝ հավատալով դրա բերելիք վաղվա օրվան:

29 Անդ, էջ 263: